

# Աhարոնյան Քահանայության քվորումի և Երիտասարդ կանանց դասարանների նախագահության կողմնորոշում



### ԱՍՏԾՈՒՑ ԿԱՆՉՎԱԾ

- Ի՞նչ է նշանակում կանչված լինել Աստծո կողմից:

### ՍՊԱՍԱՎՈՐԵԼ ՆՐԱՆՑ, ՈՒՄ ԴՈՒՔ ԾԱՌԱՅՈՒՄ ԵՔ:



- Ինչպե՞ս կծանոթանամ և կսիրեմ իմ քվորումի կամ դասարանի բոլոր անդամներին:

  **ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ.** Ծխի գործավարը կարող է ներկայացնել քվորումի կամ դասարանի անդամների ցուցակը:
- Ինչպե՞ս հետևեմ Փրկիչի սպասավորության օրինակին:

### ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



- Ի՞նչ ժողովներ եմ հաճախում և պլանավորում:

  **ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ՝** քվորումի կամ դասարանի նախագահության ժողովների և ծխի երիտասարդների խորհուրդների մասին, ինչպես նաև Եկեղեցու կանոնավոր ժողովների և միջոցառումների մասին (տես *Ընդհանուր ձեռնարկ. ծառայել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում*, 10.4.3, 10.4.4, 11.3.4.3, 11.3.4.4, 29.2.9, ChurchofJesusChrist.org):
- Վարչական ի՞նչ առաջադրանքներ ես ունեմ: Ի՞նչ գործիքներ կարող են ինձ օգնել:

  **ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ՝** ժողովների օրակարգերի (տես «Նախագահության ժողովի օրակարգի նմուշ»), ժողովների անցկացման, հանձնարարությունների պատվիրակման, առաջադրանքների կատարման և քվորումի կամ դասարանի անդամներին ողջունելու մասին (տես *Ընդհանուր ձեռնարկ*, գլուխ 4):



### ԾՐԱԳՐԵԼ ԺՈՂՈՎՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- Ինչպե՞ս կարող ենք ոգեշնչող և հոգևոր կիրակնօրյա ժողովներ ունենալ: (Տես Եկ, *հետևիր ինձ. Աhարոնյան քահանայության քվորումների և Երիտասարդ կանանց դասարանների համար*:)

  **ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ՝** *ComeFollowMe.ChurchofJesusChrist.org*
- Ինչպե՞ս կարող ենք ներգրավող և ազդեցիկ ծառայություն ու միջոցառումներ անցկացնել: (Տես «Ծառայության և միջոցառումների ուղեցույցներ երիտասարդների համար»:)

  **ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ՝** *ChildrenandYouth.ChurchofJesusChrist.org*:

# Տեղեկատվություն եպիսկոպոսությունների, չափահաս երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց ղեկավարների համար

Եպիսկոպոսությունները պարտավոր են կողմնորոշել նոր կանչված Ահարոնյան քահանայության քվորումի և Երիտասարդ կանանց դասարանի նախագահություններին: Նախագահության կողմնորոշումը կարևոր քայլ է, որը կօգնի երիտասարդների ղեկավարներին իրենց կոչումներում հաջողության հասնելու համար:

Հետևյալ նյութերն առաջարկներ են` օգնելու եպիսկոպոսության անդամներին, երբ նրանք կողմնորոշում են նոր նախագահությանը կամ ուսուցանում են գոյություն ունեցողին: Այս նյութերը և նախորդ հարցերը կարող են օգտագործվել հակիրճ քննարկում անցկացնելու համար, որպեսզի նոր կամ գործող նախագահությունների կողմնորոշում կամ ուսուցում անցկացնեն ծխի երիտասարդների խորհուրդներում կամ այլ միջավայրում: Ղեկավարվելով եպիսկոպոսի կողմից, երիտասարդ տղաներն ու երիտասարդ կանայք նույնպես կարող են վերանայել այս միջոցները քվորումի կամ դասարանի նախագահության ժողովում:

## ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

### Աստծուց կանչված 8–10 րոպե

*«Եկեղեցու արդյունավետ ղեկավարներ լինելու համար, մենք պետք է սովորենք այս կարևոր դասը. Եկեղեցում ղեկավարելը ոչ այնքան շատ ուրիշներին ուղղորդելուն է վերաբերում, որքան` Աստծո կողմից ուղղորդվելու մեր հոժարակամությանը» (Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Ձեզանից մեծը»,* Ensign *կամ Լիահոնա, մայիս 2017, 80):*

- Քվորումի և դասարանի նախագահությունները կանչվում են հայտնությամբ (տես Հովհաննես 15.16):
- Ահարոնյան Քահանայության քվորումի նախագահությունները գործում են բանալիներով, որոնք շնորհվում են, երբ քվորումի նախագահները ձեռնադրվում են: Երիտասարդ կանանց դասարանների նախագահությունները գործում են քահանայության զորությամբ, որը ստանում են նախագահությունների ձեռնադրման ժամանակ (տես Վարդապետություն և Ուխտեր 42.11, 107.5, Հավատո Հանգանակ 1.5, *Ընդհանուր ձեռնարկ*, 3.4.1):
- Նախագահությունները հաշվետու են Տիրոջը և Նրա ղեկավարներին (տես Վարրդապետություն և Ուխտեր 104.11–13, *Ընդհանուր ձեռնարկ*, 4.2.6):
- Նախագահություններն օրինակ են քվորումի կամ դասարանի անդամների համար (տես Ա Տիմոթեոս 4.12, Ալմա 17.2–3):

### Սպասավորեք նրանց, ում դուք ծառայում եք 5–8 րոպե

*«Դուք կանչված եք ներկայացնելու Փրկչին: . . . Բարձրացնելու ձեր ձեռքերը [դառնալու] Նրա ձեռքերը» (Հենրի Բ. Այրինգ, "Rise to Your Call,"* Ensign *կամ Լիահոնա, նոյ. 2002, 76):*

- Հաշվեք, գրի առեք անունները և սնուցեք այն մարդկանց, ում դուք ծառայում եք (տես Մորոնի 6.4)
- Օգնեք ուրիշներին հետևել Փրկիչին (տես *Ընդհանուր ձեռնարկ*, 4.2.3):

### Վարչական պարտականությունները 5–8 րոպե

*«Սա Եկեղեցու խորհուրդների հրաշքն է` լսել միմյանց և լսել Հոգուն» (*M. Russell Ballard, *"Counseling with Our Councils,"* Ensign, May *1994, 26):*

- Մասնակցեք ծխի երիտասարդների խորհուրդներին (տես *Ընդհանուր ձեռնարկ*, 29.2.9):
- Անցկացրեք քվորումի կամ դասարանի նախագահության ժողովներ (տես *Ընդհանուր ձեռնարկ*, 10.4.3, 11.3.4.3, «Նախագահության ժողովի օրակարգի նմուշ»):
- Աշխատանքը կատարելու համար զարգացրեք ղեկավարման հմտություններ (տես *Ընդհանուր ձեռնարկ*, 4.2):

### Ծրագրեք ժողովները և միջոցառումները 5–8 րոպե

*«Յուրաքանչյուր միջոցառում, յուրաքանչյուր դաս, այն ամենը, ինչ մենք անում ենք Եկեղեցում, մատնանշում են Տիրոջը և Նրա սուրբ տունը» (Russell M. Nelson, "Personal Preparation for Temple Blessings,"* Ensign, *May 2001, 32):*

- Տեղեկացեք ձեր պարտականությունների մասին (տես *Ընդհանուր ձեռնարկ*, 10-11):
- Ծրագրեք և ղեկավարեք, ինչպես Հոգին է ուղղորդում (տես Վարդապետություն և Ուխտեր 43.8–9, 88.119, Մորոնի 6.9):

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Ղեկավարման հմտություններ զարգացնելու հնարավորությունները շարունակվում են ծխերի երիտասարդների խորհուրդներում և նախագահության կանոնավոր ժողովներում: Այս ջանքերում աջակցելու վերաբերյալ նյութերի համար տես Քվորումի և դասարանի նախագահության նյութերը:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

© 2019 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: 8/19: Թարգմանություն. *Quorum and Class Presidency Orientation v2*. Armenian. PD60009511 201.
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում